



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԾՔՐԱԿԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱՅ ԵԱՐԱԹ 29 ՄԱՅԻՍ 1876 ԹԻՒ 1041

ԳԱԶԱՆԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ ԽԱՆԻՆ

Թուրքիոյ տարեգրութեանց մէջ մինչև ցայս տեղի չունեցած մեծ և ազդեցութեամբ յեղափոխութիւն մի ի գործ դրուեցաւ ի Կ. Պոլիս յոյժ զարմանալի հանդարտութեամբ, որ օտարներէն նախարարաց խոհական գործունէութեան ազդեցոյց մըն է:

Ամսոյս 17ին Կրկուշարթի գիշերն Ապրիլի Ազիզ Սուլթանն իւր գահէն վար առնուելով, նորա տեղն Թուրքիոյ կայսր հրատարակեցաւ Մուրատ էֆէնտի գահաժառանգ իշխանն, որ նախածին որդին է փառաւոր յիշատակաց արժանի Ապրիլի—Մէհմետ Սուլթանին:

Այս բարեյաջող մեծ յեղափոխութիւնն, որ տէրութեան բոլոր նախարարաց, իւրեմաներուն, գլխաւոր պաշտօնատարաց և ժողովրդեան միասնաբար հաճութիւն կատարեցաւ, ամսոյս 18ին առաւօտուն մուսնախինքնով և 101 թնդանօթաց արձակմամբ հրատարակեցաւ ի Կ. Պոլիս և հեռագրութեամբ պաշտօնապէս իմաց տրուեցաւ բոլոր կուսակալութեանց. ուստի թէ ի իշխանաւորութեան օրէնքներէն և թէ վիճակներուն մէջ ընդհանուր ուրախութեամբ ողջունեցաւ այս բարեբաղդ գահակալութիւնն և երեք օր տօնական բեցաւ ամեն տեղ ու գիշերներն ճրագալուսութիւնք եղան ի նշան հասարակաց գոհունակութեան և ցնծութեան. և կարի իրաւամբ քանզի Թուրքիոյ մահմէտական և ոչ—մահմէտական բոլոր ժողովուրդք ի Են յուսով թէ օգուտ Սուլթան Մուրատ Խանին գահակալութեան օրինակ հանգարտ և խաղաղ կեանք պիտի անցընեն և ժամանակէ մը ի վեր տիրող ձախողութեանց վախճանն տեսնելով բարեյաջող օրեր պիտի վայելեն: Այս բաղդը ակնկալութեամբ, որ յոյժ հիմնաւոր է, յամենայն սրտից ջերմեանք բարեմաղթութիւնք կրթչին և կրթեր-

առաքին առ ամենակայն Աստուած փառն քաջողութեան և երկար կենաց նորին կայսերական վեհափառութեան:

Սուլթան Մուրատ Ե. որ ի է առատագութ վեհազայմամբ և համակրական քաղցր կերպարանք ու բարաստ միտք ունի, ծնեալէ 1840ին. ասելէ թէ 36 տարեկան է. այսինքն այն հասակէ մէջ կրթանուի, յորում մարդոյս բարոյական և իմացական զօրութիւնքն ի կատարելութիւն հասեալ են. հետեւաբար նորին կայսերական վեհափառութիւնն որ վերին նախախնամութեան անօրէնութեամբ բարձրացաւ ի մեծագործ օսմանեան գահն, միևնոյն երկնային անօրէնութեամբ և գործակցութեամբ իմաստուն և կենցաղադէտ նախարարացն յորոց բարեբաղդաբար չընտանաւալէ, ահա յաջողի ի նաւահանգիստն իսպաղալութեան և բարօրութեան առաջնորդել զմեծ նաւն ընդարձակ տէրութեան իւրոյ:

Օգուտ Սուլթանին մարդասիրական առաջին գործն եղաւ թողութիւն շնորհել քաղաքային յանցանք ամեն արտօրեաց, որք կայսերական հրովարտակաւ ի Կ. Պոլիս հրաւիրեցան:

Երջանատեան թէ գահընկեց եղեալ Սուլթան Ապրիլի—Ազիզն, որ ի Եղբան իւր ընտանեօք թօփ Գործի պալատը կը գտնուէր ընդ զինուորական հսկողութեամբ, 25 միլիոն իւսուսնի եղբ, յորոց հինգ միլիոնն պատրաստ դրամ և 20 միլիոնն օսմանեան արժէթով: Այս գումարն փոխադրուեալ է ի գանձն տէրութեան:

ՄԱՅԻՍԻ Մայիսի 18 թուոյն մէջ հետեւեալն կրնն իւրեմբ:

«Վեհափառ Սուլթան Մուրատ»... իւր ոտացած մեծախնամ կրթութեամբ, լեզուագիտութեամբ և արթուն ու հետաքնն հանձարով դարձաւ յառաջիմական դաշտաբար խելամուտ եղած, միանգամայն իւր հօրամոյն

բարեգործութեամբ ամենուն համակրութիւնը գրաւած ըլլալով, իւր գահակալութիւնն հաւատարմութեամբ ողջունեցաւ թէ Տաճիկ և թէ Գրիստոնեայ ժողովուրդներէն:

Տարակոյս չկայ թէ եւրոպա ալ մեծ գոհութեամբ պիտի ողջունէ վեհա Սուլթան Մուրատայ գահակալութիւնն, որ Օսմանեան Պետութեան համար նոր գարագլուխ մի բտնալու կոչուած է նախախնամութեան:

«Վեհափառ Սուլթան Մուրատ» գահակալութիւնն Սպարապետի դռնէն հրատարակեցաւ. որ Ե. Կ. վեհափառութիւնն հրաւիրուած էր առաւօտուն, և անտի ժամը երկուքին տէրութեան նախարարաց ուղեկցութեամբ Սիրքէնի իսկէնսի իշնելով, արքանական փառաւոր նաւակով Տոմա—Պաքէի կայսերական պալատը դնաց, ուր բոլոր նախարարք, իւրեմայր և քրիստոնեայ ազգաց Պատրիարքնք և քաղաքային և ղինուորական բարձրաստիճան պաշտօնաւորք Ե. Կ. վեհափառութեան ներկայանալով իրենց խոնարհ շնորհաւորութիւնը ու բարեմաղթութիւնները մատուցին:

ՍԹԱՄՊՈՒԼ լրագիրն կրէ թէ նորին վեհափառութիւնն Սպարապետի դռնէն չմեկնած հաճեցաւ իւր առաջին խորհրդոյ քարտուղար անուանել զփես. Զիա—Պէյ և իւր առաջին սեւեհպետը զփես. Սէիտ—Պէյ: Յիշեալ լրագիրն կը յաւելու թէ ի մօտ աւուրս կըսպասուի նոր Սահմանադրութեան հրատարակութիւնը:

Այս բարեյաջող ազդեցութեամբ յեղափոխութիւնն ի գործ դնելու համար Մայիսի 17ին գիշերն ի դռն Սպարապետի գումարեալ ժողովոյն մէջ բաց ի բոլոր նախարարաց և մի քանի գլխաւոր պաշտօնատարաց, կը գտնուի եղբ նաև հայկազուն փես. Օտեան էֆէնտին որ հասարակաց շինութեանց պաշտօնատան խորհրդական (միւլթէշար) է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի գրեւոր Ներսիսի Հինգերորդի կարողիկոսի ամենայն Հայոց:

Հայր Տաճկաստանի ցեղ բաժանեալ երբեք յԱրտոյ էլմիածնի: (1)

Հայր Տաճկաստանի ցեղ բաժանեալ երբեք յԱրտոյ էլմիածնի մինչև ցայսօր. և չէ ուրուք լուեալ երբեք թէ իցեն նոքա միաբանեալք ընդ վիճակաւորաց Սոյ յառաջ կամայժմ որով և իցէ պատճառանօք. այլ միշտ գոլով նոքա անբաժան յԱրտոյ էլմիածնի և ի կաթողիկոսէ նորին, մինչև յսիրելի. Ռուսաց Արարատեան աշխարհին Հայոց ուխտաւորքի Հայոց Տաճկաստանի առանց պակասելոյ եկեալն յերկրպագութիւն սրբոյ Տաճարին էլմիածնի, և վարդապետք երուսաղէմի, Կ. Պոլսոյ և այլոց վիճակաց ընկալեալն զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան ի սրբազնադոյն եփրեմ կաթողիկոսէ նորին ի միջոցի 20 ամաց պատրիարքութեան նորա աւելի քան 40 ի թուոյ որոց են ներկայ Պատրիարքն Երուսաղէմի Գաբրիէլ և Պատրիարքն Պոլսոյ կարապետ և նախորդն նորա Պօղոս ընդ որս և ամենայն վիճակաւոր արքեպիսկոպոսներ ի Թուրքաստան, ի Պարսկաստան, ի Ռուսաստան և յայլ բաց յինէն և յերկոյ այլ:

(1) Բաղեալ ի Մոսկուա հրատարակեալ ՓԱՐՈՍ անուն ճանդիսի Երեքորդ տետրէն 1876 ամի, որ լի է գրեւոր տպագրութեան մամլոյ տակ:

լոց եղելոց յէլմիածնի. Եւ զՄիւրոն սրբարար նա ինքն եփրեմ կաթողիկոսն օրհնեալ անդէն յէլմիածնի ըստ ազգական սովորութեան ի ձեռն արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և վարդապետաց պատրիարքական Աթոռոյն յիւրաքանչիւր երկու կամ ի չորս ամս տարածեալ է ի Կ. Պոլիս և յամենայն քաղաքս և ի դեօղս Տաճկաստանի անխափան մինչև ց1825 թիւ. Նոյնպէս և ի Կ. Պոլիս և ի վեհնախկ և յամենայն տպարանս Հայոց իդրուխ իւրաքանչիւր գրեանց տպեալ ինի եփրեմ կաթողիկոս ամենայն Հայոց. որպէս և ի ժամագիրքն տպեալ ի Կ. Պոլիս ի յՕրթագիւղ ի նոյն 1825 ամի որպէս ի ըսկիւրն, նմանապէս և ի վերջն շարակարգեալ զանուանա կաթողիկոսաց Հայոց սկսեալ ի սրբաբաղան Առաքելոյն Թադէոսէ և ի սուրբ Գրիգոր Լուսաւորչէ. ի վերջոյ ամենեցուն նոցա տպեալ ինի 138 երորդ կաթողիկոս տէր եփրեմ որ կայ այժմ և վարէ զիշխանութիւն կաթողիկոսութեան:

Եւ թէպէտ ի պատճառս Դաւթի յաջորդին Յովսէփայ չորրորդի եղև անհամաձայնութիւն ընդհանուր յորժամ ամենայն ազգն Հայոց եղեալն ընդ ամենայն աշխարհ ի Հայաստան, ի Թուրքաստան, ի Պարսկաստան, ի Ռուսաստան և յայլ միաձայնութեամբ ընդ բաղմութեան միաբանից էլմիածնի ոչ յօժարեցան ընկալնուլ զնա որպէս օրինաւոր կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Արարատեան Աթոռոյ էլմիածնի, այլ ոչ բնաւ բաժանեցան յԱթոռոյ էլմիածնի, և ոչ իւրեք ցուցեալէ ոք յամենայն միաբանութեանց Հայոց մինչև ցայսօր զնան

միաբանութեան ընդ վիճակաւորն Սոյ. բայց միայն զի մերձուորութիւն Հայոց ընդ Ռուսաց վազն ամենայն Հայոց ի Թուրքաստան ամենայնիւ զարհուրելի է յոյժ մինչև ցայսօր, որով զան պատրիարքութեան Յովսէփայ ոչ երբեք համարձակեցան նոքա յայտնել զհամաձայնութիւն իւրեանց յաղագս պատրիարքութեան նորու զոր սիրէին առաւել մինչև որ տէրութիւնն Օսմանեանց համոզեալ ինքնին ի յառաջագրութեանց Թամարով դեռապանին Ռուսաց ի Կ. Պոլիս, գրեաց զհրաման առ Պատրիարքն և առ վեց ազգ (ալթի ճեմաւալ) անուանեալ հասարակութիւնն Հայոց Կ. Պոլսի խնդրել յանուն նորա պարտաւոր կաթողիկոսութեան: Երբեք այն և փառն պատրիարքութեան եփրեմ զարժանի էլմիածնի հետեւեալ հրաւիրել ի Ռուսաստանէ հրովարտաւօք նորին բարձրութեան ժողովուրդ տէրութեան Պարոնց Աբրահամ Միւրադի առաքելով հրաւիրակ նմա ի Ռուսաստան զվեթէն արքեպիսկոպոս էլմիածնի, հասարակութիւնք Հայոց ի Կ. Պոլիս և չորս Պատրիարքք նոքա յաջորդք միմեանց ցայս վարլ որոց և երկուք ի նմանէ իսկ ձեռնադրեալք ոչնչ իւրեք կարողացան փտահանուլ երբեքն առ տէրութիւն իւրեանց և խնդրել զհրովարտակ նորա յանուն եփրեմայ երկուցեալք ի միասնութեանց դաւրանակալաց ինքեանց. բայց ունելով դնա մշտնջենապէս ամենայն արժանաւոր վերապաշտութեամբ որպէս օրինաւոր կաթողիկոս և գլուխ սրբոյ եկեղեցւոյ ամենայն Հայոց, և կուտարեւելով զամենայն զիովադարձ պարտաւորութիւն հօտի ընդ հօտապետի ըստ ամենայն վայ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կայսերական խաթիւի հիւմայունով իւրով, որ ամսոյս 20ին սովորական հանդիսիւ կարգացուեցաւ 'ի Բարձրագոյն Դուռն, օգոստոսիաւ Սուլթան Մուրատ Ե. կրօնականէ 'ի մէջ այլոց թէ զխաւորութիւն ունի հաստատուն պահել բարեկամ տէրութեանց հետ ունեցած Բ. Դրան դաշնագրութիւններն և զարգացնել ու ընդործակել զմտերիմ յարաբերութիւնսն պետութեան իւրոյ ընդ այլոց տէրութեանց :

Արդէն Եւրոպիոյ բոլոր տէրութիւնք պայտօնական կերպիւ ճանաչեցին և ընդունեցան Սուլթան Մուրատ Ե. խանին դաշնակալութիւնն . որով ընդհանուր քաղաքականութեան խաղաղասիրական կերպորանն հաստատուն կըմնայ : Այսու ամենայնիւ թուրքիոյ ապստամբ գաւառաց նկատմամբ 'ի Պէրլին հիւսիսային երկն կայսերութեանց մէջ տեղի ունեցած որոշումն, որոյ պարունակութիւնն դեռ յայտնի չէ, և որ տակաւին պայտօնական կերպիւ Հաղորդեցաւ օսմանեան կայսերական կառավարութեանը, ինչեալ որոշումն, կըսեմք, ըստ երեւմանց պիտի մերժուի 'ի Բարձրագոյն Դրանէ : Ստոյգ է թէ Եւրոպիոյ բոլոր մեծ տէրութիւնքն, բաց 'ի Մեծին— Բրիտանիոյ կառավարութիւնէն, իրենց հաւանութիւնը տուած են Գորդչաքօֆ իշխանին ծրագրին՝ որ զինչեալ որոշումն կըբովանդակէ, բայց Բարձրագոյն Դուռն, որոյ զինուորական զօրութեանց առջև ապստամբաց զօրադուռներն չեն համարձակիր ճակատ առ ճակատ մարտնել, իրաւունք ունի անշուշտ մերժելու Գորդչաքօֆ իշխանին ծրագրին . որ փարկի դաշնագրութեան արամագրութեանցը հակառակ կըհամարուի :

Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնէն պիւ Տէքազ երեսփոխանական ժողովոյն մէջ ըրած մէկ ատենարանութեամբ, Եւրոպիոյ այժմեան ընդհանուր կացութեանը վրայօք լսուելովստոց թէ ինքն համոզեալ է որ Եւրոպիոյ խաղաղութեան համար հարկաւոր եղած համամոտութիւնն ամենայն ուրեք պիտի հաստատուի և թէ գաղղիական կառավարութիւնն ամեն ջանք 'ի գործ կըդնէ 'ի կարգադրութիւն ներկայ քաղաքային դժուարութեանց :

Գարձեալ Լոնտոնէն կըգրեն թէ Մեծին Բրիտանիոյ արտաքին գործոց անուշ Տէքազ լորտն մեծ փափաք կըցուցնէ որպէսզի յաջողի ընդհանուր համաձայնութիւն մի հաստատուելու 'ի

մասին կարգադրութեան Արեւելեան գործոց : Ի մօտ աւուրս համարաւ մի տարածուեցաւ թէ միջադեպին ժողով մի պիտի գումարուի, պաշտօն ունենալով քննել և խորհրդակցել 'ի վերայ հիմանց ծրագրին Գորդչաքօֆ իշխանին : Այս համարաւ Լոնտոնի մէջ հիմնաւոր կընկատուի :

ԱԶԳԱՅԻՆ

ՇՆՈՐՀԱՐԵՐ ՄՈՒՏ Ի ՏՓԻՒՍ

Գերա. նոր Սոաջնորդին կովկասու եւ իմերէթու :
(Բաշէւ 'ի Մեշէ— Հայաստանի Լոգիէն Տէրիւն)

Ի 18երորդումն Ապրիլի, նորահաստատ Առաջնորդն վիճակի մերոյ քրքազան տէրֆարքիէ Արքեպիսկոպոսն Այվազեան Եհաս 'ի Տփլիս :

Եղանակն յոյժ գեղեցիկ էր և պարզ խուռն բազմութիւն ժողովրդեան գումարեալ էին 'ի բակն մայր եկեղեցւոյն վանուց և 'ի հրապարակն 'ի եկեղեցական դասն շուրջառներ հագած, խաղաղներով և բուրվառներով ընդունեց ընդ Նորին բարձր Սրբազնութիւնն 'ի հրապարակն վանուց . ուր նա իջնելով 'ի կառաց մտաւ ամոլ հովանոյն ներքև 'ի եկեղեցականք 'ի երկուս շարս բաժանեալ, «Հրաշափառ» շարականն երգելով ծանրաքայլ ընթացիւ ք առաջնորդեցին զՆորին Սրբազնութիւնն յեկեղեցին . ուր դերասանութիւն Այվազեան Արքեպիսկոպոսն 'ի բեմն ելանելով ատենարանեց, և 'ի մէջ այլոց, ասաց թէ վիհափառ սրբազնագոյն կաթողիկոսին Հայրապետական ողջոյնն և օրհնութիւնը կըբերէ, և միանգամայն յայտնեց թէ ինքն Նորին Օծութեան հրամանաւ և օգոտս կայսեր վաւերացմամբ, կարգեալ է Առաջնորդ կովկասու և իմերէթու վիճակին : Յաւելցուց նաև թէ նախագդ արով այս պաշտօնին ծանրութիւնն և այն ամեն դժուարութիւնքն որոց յաղթելն բարձր կըհամարէր իւր կարողութեան, քանիցս անդամկամեցեալ է խնարհաբար չընդունել զորոշումն վիհափառին . սակայն վերջապէս հարկ համարելով պառկառկալ Նորին Օծութեան հրամանացն և ստիպեալ 'ի յորդորանաց բարեմիտ ժողովրդականաց ոմանց, յանձնառու եղեալ է այս ծանր պաշտօնին . զոր կըյուսայ, շնորհիւն Աստուծոյ և օգնութեամբ ամենեցուն, վարել յաջողութեամբ յօգուտ Ս. եկեղեցւոյն և Ազգին, որոց հարազատ և անձնանուէր պաշտօնեայ է : Գերա. Ս. Առաջնորդն յայտնեց նաև թէ ինքն թէպէտ չունի իւր երջանկայիշատակ նախորդացն և իւր

արժանայիշատակ նախորդին բարեմանութիւնքն և յարմարութիւնքն, բայց ունի նոցա լաւ տէր և եռանդ, որք անշուշտ արդիւնաւոր պիտի լինին մայր եկեղեցւոյն և ազգին, եթէ ամենեքեանք հեռանալով յերկպառակութեան և 'ի կոռսակցական զգացմանց, միաբանին պիտի և աշխատին գործել իւրեան հետ 'ի միասին համաձայնութեամբ :

Յետ այնորիկ Նորին բարձր Սրբազնութիւնն 'ի դժուարութեանց ճանապարհին մեծապէս յոգնած էր, պարտաւորեցաւ վերջացնել զատենախօսութիւն իւր, ծանուցանելով թէ 'ի կարմիր կիրակին 'ի 25 Ապրիլի պիտի կարգացուի Հայրապետական կոնդակն, և նոյն ատիւ վերստին պիտի ատենարանէ . ուստի օրհնելով զժողովուրդն արձակեց զնա 'ի խաղաղութիւն եկեղեցական դասն գարձեալ միւսնոյն հանդիսիւ, առաջնորդեց զՆորին բարձր Սրբազնութիւնն յազգային Առաջնորդ արանն :

Ի հետեւեալ աւուրս, 19 Ապրիլի ժամը ցին ներկայացան գերա. Առաջնորդին եկեղեցականք քաղաքիս, յորոց չորս անձինք պարագայս յիս յարմար զանազան ճառեր ընթերցան :

Ի նոյն աւուր ժամը 10ին, ըստ ցանկութեան գերա. Առաջնորդին, Ներսիսեան դպրոցին հոգաբարձուք և ուսուցիչք ներկայացան Նորին բարձր Սրբազնութեան :

Գարձեալ Ապրիլի 22ին օրը Տփլիսի սուրբ Գայիանեան միջնակարգ ուսումնարանի վարուչութիւնն ներկայացաւ գերա. Ս. Առաջնորդին :

— Ի Տփլիսէ բարեկամ ոմն Մայիսի 1 նամակաւ իւրով, հաղորդէ մեզ նաև զհետեւեալն :

Ի 18երորդումն Ապրիլի Տփլիսեցիք խուռն բազմութեամբ և ցնձալից ուրախութեամբ ընդ առաջ ելին գերա. ուսումնապետ Նոր Առաջնորդին իւրեանց և որդիական շերմեանք պիտի ողջունեցին զշնորհաբեր գալուստ նորա :

Տէր Գարեթէ Այվազեան սրբազան 'ի 22 նոյն ամսոյն յանդիման եղև բարձրա. փոխարքային կովկասու, որ մեծաւ մարդասիրութեամբ ընկալաւ զնա : Նորին Սրբազնութիւնն զբարեկամ այժմ յայցելութիւն եկեղեցաց և դպրոցաց Տփլիսի : Եւ թէպէտ ամենայն ուրեք և յամենայնի տեսանէ նա տակաւին կարօտութիւն յոյժ բարեկարգութեան և բարեգարգութեան բայց ոչ վնասի ապաւինեալ յօգնականութիւն Բարձրեմին, 'ի ձեռնառու օժանդակութիւն վիհափառ Հայրապետին մերոյ, ևս և յանվանք պաշտպանութիւն Պետութեան և մանաւանդ յեռանդն բարեպաշտութեան և ուսումնասիր

ՓՈՐՁ

Այս անուամբ, առաջիկայ Յուլիսի 1էն սկսեալ, ընդարձակ հանդէս մի պիտի հրատարակուի 'ի Տփլիս խմբագրութեամբ մեծապէս պարուն Արգարի Յովհաննիսեան, աշխատակից ունելով ինքեան ոչ սակաւ ազգային դրագէտներ, որոց մէջ հաճութեամբ սրտի կըսանեն մը առայժմ երկու հոգի 'ի գեղեցիկ սեռէն . այն է Երկին Սրբուհի Երկեանց Զմիւռնայի, և օրիորդ Գոթիանէ Յովհաննիսեան :

ՓՈՐՁ հանդիսի խմբագիր—Հրատարակիչն, որ ինչպէս կըլինի, նիւթական բաւական կարողութիւն ունի և ամենեկին շահու նպատակաւ ձեռք չէ զտրկած այս գործոյն, 10էն մինչև 20 լուրքի վարձք կըխօստանայ իւր աշխատակցացն վրան իւրաքանչիւր տարագրական թերթի երկաւորութեան : Յիշեալ հանդէսն՝ որ բարեկամեալ պիտի լինի 'ի 20—30 տարագրական թերթից (իւրաքանչիւր թերթին ունենալով 16 տրեւ շիւտափայլի չափով), երեք ամիսն անգամ մի պիտի հրատարակուի առայժմ և պիտի պարտենակէ ուսումնասիրական, պատմական, մանկավարժական, թատրոնական և ուրիշ զանազան բարոյական ընդարձակ յօդուածներ, նմանապէս ազգային օգտակար խորհրդածութիւնք, ներքին և արտաքին տնտեսութիւնք, գաւառեցիկ նոթիւնք նորաստիպ մատենից, գիտութեանց և արուեստից վերաբերեալ բացատրութիւնք և այլն և այլն :

ՓՈՐՁ հանդիսին աւորիկան բաժանորդ ալ լին

եկեղեցւոյն հաւատոյ քրիստոնէութեան սպանէին յաջողութեանց ժամանակի :

Բայց յամի 1825, յորժամ էր 'ի սուրբ վանսն Հաղբատայ 'ի սահմանս Ռուսաց ապահովացեալ Եփրեմ կաթողիկոս, Հիւսէին խան սարտարն երեւանու յետ բազում յուսադութեանց իւրոց և յորդորանաց իւրեւ ոչ կարաց հաւատարմացնեցան զնա 'ի վերագործուցանել յաթոռ իւր 'ի սուրբ Էջմիածին, ապա չարաչար ամբաստանութեամբ զմանէ յօրինեալ զգիր 'ի դիմաց ամենայն միաբանութեան Էջմիածնի և Հայոց երեւանայ ըստ իւր հաճոյս առհասարակութիւն Հայոց 'ի Կ. Պոլիս, ետ ստորագրել և կնքել նոցա զայն : Ետ գրել և Աբբաս Միրզա ժառանգին տէրութեան Պարսից առ Բէյլի Էֆէնտին 'ի Կ. Պոլիս, և առ մի նիսդրն իւրեանց . որում գրեաց և ինքն զամենայն զվտանդաւոր ամբաստանութիւն իւրեւ զի Եփրեմ կաթողիկոսն գրելով 'ի սրտէ յարեալ 'ի Ռուսս, և ատեցօլ և թշնամի հաւատոց և տէրութեանց օսմանցուց և Պարսից գնացեալ 'ի սահման Ռուսաց վանս գտանելոյ զօգնականութիւն յաղաղ պարտուց Էջմիածնի, ոչ ևս յօժարի վերագառնալ և հարկաւոր է զի փախանակ նորա կացուցեն զայլ ոք կաթողիկոս Էջմիածնի յառաջագրելով և զմանս յեպիսկոպոսաց ինքն իւրեւ զհաւատարման տէրութեանց թուրքաց և Պարսից, և առաքեաց զայնոսիկ գրութիւնս 'ի Կ. Պոլիս 'ի ձեռն Յօհաննէս անուն եպիսկոպոսի արհամարհեցելոյ 'ի սրբազնագոյն կաթողիկոսէն Եփրեմայ և 'ի բազմաց՝ որ հա-

ճոյացեալն էր ինքեան յայնժամ, և 'ի ձեռն միոյ մահմետականի յիւրոց հաւատարմաց :

Տէրութիւն Օսմանցւոց հարցախնդիր եղեալ առ այն 'ի Պարսիսարգէն Կ. Պօլսոյ և յազգապետաց Հայոց, յառաջագրեաց նոցա առնել զարժանն առ այնպիսի ամբաստանութիւնսն զԵփրեմ կաթողիկոսէն . յորժամ և նոքա առ ապահովացուցանելոյ զինքեանս 'ի վերահասեալ վտանդէն զոպարտութեանցն յերեւանու Սարտարէն, լուեցուցին յամենայն եկեղեցիս Հայոց 'ի տէրութեան օսմանցուց զիշատակ անուան Եփրեմ կաթողիկոսի ըստ օրինաց : Այլ վանս ընտրութեան յառաջագրելոցն 'ի Սարտարէն փոխանակ նորա կաթողիկոս Էջմիածնի, ջանացան որքան և կարողացան, և շնորհօք Աստուծոյ հաւանեցուցեալ զտէրութիւնն խափանեցին զայն մինչև յայսօր : Չարագոյն ևս քան զայնս 'ի ժամանակ զօրաց Ռուսաց 'ի Թէփլիզ գրեաց և Շահն առ Սուլթանն Օսմանոյ զմանս ծանր ամբաստանութիւնս յաղդէ Հայոց եղելոց 'ի տէրութեան Պարսից՝ յառաջագրելով նմա՝ առաւել քան 'ի թշնամեաց դժուշանսոյ 'ի Հայոց որք գրելով 'ի տէրութեան օսմանցուց առաւել բազմութեամբ, կարեն լինել առաւել միատակար տէրութեան օսմանցուց, քան որքան եղեն միատակար իւրումն տէրութեան հայտարար իւր : Եւ ըստ այսոցիկ չարախօսութեանց սասանեալ ամենայն ազգն Հայոց 'ի տէրութիւն օսմանցուց՝ սպասեն ըստ ժամանակի՝ օգնականութեանց կաթողիկոսին ինքեանց :

բուժական բնակաց քաղաքիս առհասարակ և
'ի խուռն բազմութիւն ուսումնասէր երիտա-
սարդաց մերազնեայց :

Ասեն թէ Ս. Էջմիածնի Սինդոն, քստ հրամա-
նի վեհա կաթողիկոսին ամենայն Հայոց փա-
ռաքելով դերբիմանալի ընել զսուրբ Աւետա-
րանն բոլոր Հայ ժողովրդոց մտադիր է յաշ-
խարհիկ բարբառ թարգմանել և 'ի լոյս ընծա-
յել զայն : Բայց արդեօք ո՞ր հայաբնակ երկրին
աշխարհաբար լեզուն աւելի կանոնաւոր է և
պէտք է նախամեծար համարուի , որպէսզի
դերբիմանալի լինի բոլոր Հայ ժողովրդոց :

Թիֆլիզի ՄԵԱԿ լրագիրն իւր թուոյն մէջ որ
'ի 22 Ապրիլի , կրօնութայ հետեւեալ կերպիւ
յայտնել զգլխաւորութիւն իւր , որոյ 'ի վերայ
հրաւիրեմք զուշադրութիւնն գրագիրաց :

«Մենք թէ և չենք համարում «Արարատի»
ժանր , անմարսելի , խառն , այլանդակ աշխար-
հաբարին , ինչպէս որ չենք կարող համակրել և
թիրքիտի Հայոց լրագրութեան և Միսիթար-
եաններին անճոռնի աշխարհաբարին , մենք թէ և
'ի հարկէ կրկամենայինք որ Աւետարանը թարգ-
մանվէր ժողովրդին աւելի հասկանալի բարբա-
ռով , այն է՝ «Հիւսիսափայլի» կամ մեր արդեան
կովկասեան Հայոց լրագրութեան լեզուով(1) ,
բայց մենք այնու ամենայնիւ կը համարենք լրա-
գրութեան մեծ յաղթութիւն , եթէ Աւետա-
րանը առաջին անգամ թարգմանվի և այն աշ-
խարհաբար լեզուով , որով գրում է Արարատը
և որի ձևերին մենք չենք կարող համակրել» :

Մեր կողմանէ կըցաւիմք մեծապէս որ 'ինչ-
պէս ազգային գրեթէ ամեն գործքը , նմանա-
պէս և ազգային աշխարհաբար լեզուն խիստ
անկանոն և անխառնական վիճակի մէջ կըգրա-
նուի : որոյ միմայն դարմանն է , քստ մեր հա-
մովման , գրաբար լեզուն հիմն բռնել և մեր-
ձինարով 'ի նա սակաւ առ սակաւ , կանոնաւո-
րել և 'ի մի ձև վերածել զաշխարհիկ բարբառ-
մեր , քստ օրինակի Բունաց ազգին :

(1) Բայց կովկասեան լրագրութեան լեզուն դժուար-
խառնալի է թուրքիոյ Հայ բնակչաց համար :
Ծանօթութիւն Արարատայ :

տանն մանէթ , այսինքն իբր 40 ֆրանք է :
Սիրելի է մեզ յուսալ թէ ամեն երկրի բարե-
ւոր Հայ ժողովուրդն յօժարամիտ պիտի փու-
թայ բաժանորդ գրուի այս ազգօգուտ ընդար-
ձակ հանդիսին , առ 'ի գործակից լինել նորա
յառաջադէմ յաջողութեանն :

ՀՐԱԽԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ամենապատիւ Թիֆլիսեան Ս. Հայրիկին բանաս-
տեղական ուսանաւոր երկասիրութիւնն է 'ի պարզ
գրաբար գեղեցիկ բարբառ , բաժանեալ 'ի հինգ նուա-
գրս : Այս հայրեմասիրական ընտիր գործն , որ երկ-
րորդ տպագրութեամբ 'ի լոյս ընծայեցաւ , զնորին
ազնուամեծար Յակոբ Էմեհտիի Նորաստեղծեան ,
բաղկացեալ է ութսուտ 136 երեսներէ հանդերձ յա-
ւելուածովն , որ է «Բրմունջը-Հայրեմասիրի» վերնա-
գրով ողբերգութիւնը 'ի վերայ քաջին Վարդանայ Եւ
ճիգակացացն նորա , եւ 'ի վերայ սրբոց նահատակա-
ցն Ղեռնուցեանց :

Յիշեալ երկասիրութեան առաջին տպագրութիւնն ,
որ սպառեալ է , բաղկացեալ էր 'ի չորից նուագոց
միայն . ուստի հինգերորդ նուագն նոր է . յորում Ս.
ճիգակեան իրաւացի գանգատ կըբառնայ առ Ս. Սա-
նակ հայրապետն ընկղմեալ այնոցիկ , որք զգրաբար գե-
ղեցիկ լեզուն մեր ուսանել , ուսուցանել եւ ազգին
մեջ տարածել զանդաւելով , մեռաւ այն եւ քաղեցաւ
կրօն , եւ զաշխարհիկ անկանոն բարբառն միայն
կըգործածէ իրենց ամեն աշխատասիրութեանց մէջ :

ՀՐԱԽԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ մատենան 'ի լոյս ընծա-
յեալ այս տարի 'ի Կ. Պոլսի 'ի տպարանի Ե. Մ.
Տմատեան եւ որոյ քրտակազմին գինն 2 ֆրանք է :

Ահաասիկ վերոյիշեալ գանգատն :

Թողէք ինձ , մանկունք , աստէն դանդաւ
բառնամ հեղինակ Հօրն
Հայն անհաւան քերականաց , որ զհին
լեզուն հարթել ճգնին .
Ասեն թէ Սահակ մեռաւ , մեռաւ
լեզուն և թաղեցաւ ,

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ուրախ սրտիւ կըլսեմք միշտ թէ Բագուի
Հայոց Մարդասիրական Ընկերութիւնն , որ
1864ին հաստատեալ է յանուն սրբոյն Գրիգորի
Լուսաւորչին Հայաստանի , և որոյ կանոնադրու-
թիւնն վաւերացեալ է կայսերական բարձրագոյն
հրամանաւ , Բագուի Մարդասիրական Ընկերու-
թիւնն , կըլսեմք , ամբար ամէ կը յառաջադի-
մէ և կը պայծառանայ . իւր ազգասիրական և
բարեգործական Աստուածահաճոյ արդիւնքովն
և իւր բարեկարգ վարչութեամբ , Այս պատ-
ճառաւ ոչ միայն Բագուի ազգայնոց , այլև բո-
լոր Ռուսիաբնակ Հայոց համակրութիւնն 'ի ձեռս
բերել յաջողած է :

Թիֆլիզի ՄԵԱԿ- Հայաստանի լրագրէն կիմանաւ
թէ Հայ բեռնակիր մի կարապետ Միրանցեանց
անուանեալ , որ Մարդասիրական Ընկերութեան
անփոփոխ անդամ(1) էր , յանցելուամբ մերանե-
լով Բագուի մէջ , կտակեր է
Մարդասիրական Ընկերութեան ուրբի 1000
Աղքատաց Ընկերութեան » 200
Բագուի երկուց եկեղեցեաց » 200
Իւր երկուց եղբարց » 600
Իւր երկուց քերց » 300
Եւ իւր թաղման ծախսոց համար » 200

Ընդ ամենը ուրբի 2500
որ օսմանեան լէրիւ շուրուշ իբր 50.000 կրնէ :

Հանգուցելոյն յուշարկաւորութեան և թաղ-
ման հանդէսն , ինչպէս որ իւրաքանչիւրք դի-
րաւ կրնայ երևակայել , խուռն բազմութեամբ
և մեծ փառաւորութեամբ կատարուել է ,
իննամօք Մարդասիրական Ընկերութեան , և
յիշեալ տիւրուր հանդիսին ըննելէ ետեւ , մեծ
ճաշ մի տրուել է , որում սեղանակից գտնուել
են 'ի հոգևորականաց և 'ի յուշարկաւորաց 400
էն աւելի անձինք : Այս հացկերութիւն առթիւ ,
Մարդասիրական Ընկերութեան նախագահ Մա-
միկոսեանց մեծարգոյ պարոն Աւետիքն համա-
նախարարեալ :

(1) Իւրաքանչիւր անփոփոխ անդամ , քստ կանո-
նադրութեան , պարտաւորեալ է նախքան Մարդասի-
րական Ընկերութեան մէկ անգամ եւ ամեն ժամանակի
համար առ նուազն հարիւր ռաբլի : Ծանօ. Մըշ

Հարկ է թողուլ զայն 'ի բաց և
կենդանի լեզուաւ վարիլ :
Հին լեզուն ստուռկ լիցի , և իշխոցէ
բիրտ աշխարհիկն ,
Ձոր տաշիւ կոկել 'ի բան , ասեն ,
գիտեմք , նոր որուեստիւ .
Ձբառս երկայն կարճեմք անյօդ . չեն
պիտոյ կապքն ձայնաւորք ,
Ձօրեղբայրն և զմօրեղբայր կարեմք
հընչել հօրար մօրար .
Եւ այսպէս համառօտեմք ըզլուանդ աղ
Հայոց բարբառ :
Իսկ դու զինչ խօսիս առ այս , Հայր
գայրութեան , ոչ զայրանաւ ,
Երբ որդիք յանդըռնք զհիմն
լեզուն շըրջել ջանան .
Ըզընծոհ , զխաղաղութիւն , զդաշնակ
հընչումն ազարտելով ,
Ձոր յըրով գարք կաղմեցին և քո
հանճար մըշակեաց զայն .
Քո շնորհիւ պայծառացաւ եկեղեցին
օրհներգութեամբ ,
Քո շնորհիւ Մովսէս , Յիսուս խօսին
ընդ մեզ կտակարանաւ .
Քե թող մանկտին զԱստուրոյն և
ըզնունին զօտարածայն ,
Քե լեզուքն ծանրախօս արդ
խիղախին արագ ախօս :
Դիք մանկունք , ըզլուելքս ձեր
ընդ առաջով Սահակայ հօր .
Ձաջըք բարձ , սուրբ Հայրապետ ,
օրհնեալ զմանկտին զի զարգացին ,
Եւ մի լիցին ժգլիր՝ ձեռօք , փոխել
դըրժել քստ հաճոյից ,
Այլ սիրել , խօսիլ , դըրել , և բարբառոյդ
պահել զաւանդ :

նօս' բայց ազգու և գեղեցիկ ստեղծագործու-
թիւն մի ըրեր է յառաջ բերելով հանդուցելոյն
կտակած դուամարին նշանակութիւնն և նորա
յիշատակին անմոռաց մնալոյն արժանաւորու-
թիւնն . նմանապէս յուշածել է զնորիւր պայ-
պարտաւորութիւններն զօրս իւրաքանչիւր Հայ
ունի առ իւր Ազգն , առ իւր եկեղեցին , առ
իւր սուրբ կրօնն : Ատենախօսութիւնն (քստ
թղթակցին ՄԵԱԿ- Հայաստանի լրագրոյն , յորմէ
քաղեալ եմք այս տեղեկութիւնները) , վերջա-
ցեր է եռանդուն ծախահարութեամբ ունիլն-
դրոց , որք աղտոտելք են «կեցցէ նախադահն
Մարդասիրական Ընկերութեան» :

—Դարձեալ յիշեալ լրագրոյն մէջ հետեւեալ
կընթեռնումք :

«Բագուից հաղորդում են , որ Մարտի 28ին
Ծաղկաղարդի օրը Մարդասիրական Ընկերու-
թեան «Հօրիփոխման» ուսումնարանի օրհորդ-
ները ծխական ուսումնարանի աշակերտաց հետ
միասին եկեղեցում խումբ խումբ կանգնած
կատարարութեամբ ձայնագրագէտ Կ. Կ. Կ.
Յովհ. վարժապետի , դպրութիւն արել են սյա-
տարագի ժամանակ , թէ օրհորդներն և թէ
տղայոց ներդաշնակ երգեցողութիւնը զխաղ-
ցրել են հանգիսականներին» :

Ուրախ սրտիւ կըլսեմք թէ Կ. Պոլսոյ աղջ ային
կրօնական սուրբ ժողովն մշտնջենաւոր աւագու-
թեան պատու անուն ընծայել է Պատրիարքա-
կան փոխանորդ դերաս . Մկրեան տէր Յովհան-
նէս քահանային . նմանապէս միւսնոյն տիտղոսն
շնորհք է Հինքեարպէյէտիտիտեան տէր Յովհան-
նէս , Միջագիւղի տէր Սահակ և Խաղիկ զի Տ.
Երեմիա արժաւ քահանայից :

—Հաճութեամբ սրտի կըլսեմք թէ գերա . Տ.
Եղիշէ ծայրագոյն վարդապետն որ Պատրիար-
քական փոխանորդի պաշտօնիւ Ատանայի վիճա-
կը կըգտնուի , հայրական խնամք և խաղաղա-
սիրական ջանք կըհնչուէ զհոգևոր հօտ իւր :

Միւսնոյն հաճութեամբ կիմանաւք թէ կերա-
պապեան մեծարդոյ Պողոս աղան , որ Չմիւռ-
նիպէն Պատանա երթալով առեւտրական գոր-
ծովք , 'ի նոյն քաղաքն հաստատեալ է այժմ
զբնակութիւն իւր , բարեհաճել է ազգասիրա-
բար 5000 շուրուշ նուիրել 'ի նպատակ սուրբ Աս-
տուածածնայ եկեղեցւոյն Ատանայի :

Համառօտ ընդհանուր պատմութիւն
դպրոցաց համար :

Այս կարեւոր աշխատասիրութիւնն , զոր յօրհնելու
վերայ է յարգոյ Մ. Մամուրեան գրագէտը , բաղկաց
եալ պիտի լինի յերից հատորոց . յորոց առաջին հատորն
բաժանեալ է յերկու մասուս :

Առաջին մասն 'որ այս տարի 'ի լոյս ընծայեցաւ 'ի
Զմիւռնիա 'ի տպարանի Տէ տէնան , ութսուտ 203 երես
ներէ բաղկացեալ է և կըպարտենակէ Արեւելեան գլխա-
ւոր ժողովրդոց ինչպէս նաեւ Հայոց հիւսիսամասին
Իսկ 2րորդ մասը բոլորովին պիտի յատկանայ Յունաց
կարեղութեանց և Հուովկացոց պատմութեանը :

Ազգային նորոս մանկանց կամ նախակրթական
դպրատանց համար յոյժ օգտակար գտագիրք մի պիտի
լինի այս ընդհանուր Պատմութիւնն . որոյ առաջին հա-
տորոցն առաջին մասն , որ արդէն 'ի լոյս ընծայեալ է
կարձ 1 ֆրանք 20 սանթիմ :

ՄԱՆԿԱՏԻՐ

ՀԵՂԻՆԱԿ ՇԱՆՓԼԵՐԻ

Պարծալ 236 երեսներէ բաղկացեալ ընտիր ու-
գողութիկ երկասիրութիւն մըն է մանկանց գատիւ-
րականեան վրայ : Հեղինակը կընկարագրէ մանկանց
այլեւայլ հասակի պահանջումները , խաղերը , հոգե-
բանական հանգամանքն , որոցմէ փխտ ուշիմ դա-
սեր , նորք դիտողութիւններ կըբառնէ , համառօտ եւ
պարզ այլ իմաստայից ռճով , եւ կըբառնէ ճնորդք
որ հին ճամբան բողոքն ու աւելի բանաւոր եւ օգտա-
ւետ ընթացք մը բռնեն իրենց մանկանց կրթութեան
համար : Այսպիսի գործեր որբով շատեան ազգին
մեջ այնքան օգուտ կրնան բերել , եւ քարգնահիցն
մեծաւ . Մ. Մամուրեան , որ 'ի յիշատակ իր վաղամե-
տիկ որդիկին նուիրած է զայն , աւելի սիրուն գործ մը
չէր կրնար ընտրել ոչ միայն իր հայրական գործիչ
յայտնիւս , այլեւ գործնական հրահանգ մը տալու :

